



47. ՀՆԱՐԱՄԻՏ ԹԱՔԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մե գեղացի խեղճ մարթ ա հըլնում: Էս մարթը լավ աբրուստ չուներ, հըմա օխտը լավ տղա ուներ: Ինչ տղերք, մեկը մե ազրայել: Տենողն ասում էր. «Էրնեկ քո տիրոջը»: Տղերքը մեկը մեկից մեկ-էրկու տարով ին մեծ, էսենց, որ էկավ ըտոնց պսակվիլու վախտը, տան մեջը իրեք-չորս խասուկ տղա կար:

Էս մարթը բերեց զոչ տղին պսակեց: Հիրկունը քնան, գիշերվա կեսին թազա խառը ճվճվոցը գցեց:

Վազան տեսնան՝ ինչ ա պատահե, խառսն ասավ.— Պատից մե գել դուս էկավ, մարթիս կերավ:

Էլ ի՞նչ անեն: Ուսուր մնաց որփեների ու ասավ, որ էլ մարթի չի էթա, օխտը տարի էտ տղին սիրեր ա:

Բերին մեկէլ տղին պսակին: Էլի էն պատմությունը:

Էսենց խինգը տղին պսակին, խնգին էլ գալը կերավ: Ուինգը ջահել-ջիվան խառս որփեների մնացին: Մնացած էրկու տղին խերը չի պսակում:

Էս մարթի անբախտության ձենը խասավ էդ երգրի թաքավորին: Թաքավորն էլ էտ բանի վրեն շատ զարմացավ, հելավ չորերը փոխեց, դառվեչի չորեր խաքավ, էկավ էս մարթի տունը: Տեսավ՝ սքի մեջ են: Դառվեչն էլ գեղացուն ասավ, որ ինքը գրբաց ա, թե որ ուզում ա, ինքը բախտը կըբացա:

Գեղացին դառը ծծղաց, ասավ.— Դառվե՛չ բարա, էլ ինչ բախտ բացել, էն ա՝ անբախտ ենք ու անբախտ:

Դառվեչն ասավ.— Հույսդ մի՛ կղրա, արի ձեռդ քսա՛ էս թասին:

Գեղացին ձեռը քսեց թասին:

Դառվեչը հիշկաց թասին, ուրախ-ուրախ ասավ.— Ա՛յ մարթ, ի՞նչ անբախտ, դու բախտավոր մարթ ես:

— Ո՞նց եմ բախտավոր, ա՛յ դառվեչ բարա, խինգը տղես գնացին, գելի բաժին դարցան, հըլա բախտավոր ե՞մ, բա էտ ասելու բան ա՞:

— Դու բախտավոր ես, ա՛յ մարթ, հէքուց վեր կըկենաս, գըկնաս թաքավորի մոտ, դարդդ կըպատմես, կասես. «Թաքավոր՛, մե հնա՛ր

արա»։ Թաքավորը քո էրկու տղին կրտանի պալատ, կրպսակա, հինքն էլ կըղաոնա քավոր, ընտուց եղը մե բան կըհըլնի։

—Դատվե՛չ բաբա, բա Թաքավորը լայեղ կանա՞ մե քյասիր գեղացու քավոր դաոնա, ի՞նչ ես ասում։

—Կըղաոնա, էտ քո բանը չի, դու գնա՛ Թաքավորի մոտը։

էս մարթը գնաց Թաքավորին նաղըլ արավ հիրա գլխի էկածը։

Թաքավորն ասավ. —Գնա տղերքիտ էլ, ըստոնց սիրածներին էլ բե՛ր պալատը, ես կըպսակեմ, պահակ կընշանակեմ։ Մե գելն ի՞նչ ա, որ չըսպանենք։

էս մարթը գնաց, տղերքին էլ, իրանց սիրածներին էլ բերեց Թաքավորի պալատը, գնաց տուն։

Թաքավորը հենց էտ օրը հիրա ծախսով տղին պսակեց, հինքը դարցավ Թաքավոր¹⁰։ Օխտ օր, օխտը գիշեր խառսնիս արավ, ըտուց ետը Թաղա խառսին ու տղին տարան մե օթախ, դուռը փակին ըտոնց վրեն, Թաքավորը բանլիքը դրեց հիրա ջեբը, քառսուն պահակ նշանակեց, որ օթաղի ամեն յանը տասը պահակ կայնի, գելը գա թե չէ՝ սպանեն։

Պահակներին էլ մե վերակացու նշանակեց ու ասավ. —Տղին որ մե բան պատահավ, գելը ներս մտավ, բոլորիդ գլխները կըկդրեմ։ Ջգո՛ւչ մնացեք։ Դժվարը հառաչի քշերն ա։ Էսօր որ ազատվավ, թլիսմը կըկդրի, էլ տղին բան չի հըլնի։

Գիշերվա կեսին խառսը վայվայը քցեց։ Թաքավորին խաբար տվին։ Էկավ, դուռը բացեց, տեսան՝ տղա չըկա։

—Ա՛յ խառս, տղեն հո՞ւր ա, —ասավ Թաքավորը։

—Պատի ճղանգից մե բլոջ դուս էկավ, դարցավ գել, մարթիս դուլ տվեց, —ասավ խառսը։

Ի՞նչ անեն, անմեղ պահակներին խո չե՞ն սպանի։

Գիշերը մութ տեղը պահակը բլոջ կըտենա կամ թե տեսավ՝ հի՞նչ հիմանա, թե էդ բլոջը գել ա։

էտ տղի յոթը կատարեցին թե չէ, Թաքավորը բերեց էլի նոր խառսնիս արավ յոթ օր, յոթը գիշեր։ էտ օրերին մե բանցը վիչկա չինել տվեց՝ չորսը սան վրեն։ Մներին մազեթ քսեց, որ բլոջը գա բանցընալու, կպնի մազեթին։

Թաղա խառսն ու փեսին տարան էտ վիչկի վրեն չինած օթաղը, նարդըվանը վերցին, որ բլոջը նարդվանով չըբանցընա, վիչկի չորսը յանը արին չորդվան, սալդաթները կայնեցրին սների մոտը, թրերը տվին ձեռները։

10 Հավանաբար ասացողն այստեղ շփոթվել է (Ծ.Կ.)։

Թաքավորը հրաման տվեց. — Գել, գազան, մարթ, բլոջ, ինչ որ գա, սներին մոտենա, սպանեն, դամա-դամա փոթեն: Ես թաքավոր ըլնեմ, իմ աչկի հառեչը իմ սանիկներին սպանե՞ն: Էտ տեսակ բա՞ն կըհըլնի:

Գնացին քնան, հըմա թաքավորն էլ հիրա օթաղի ակուչկից ա դարավուլ քաշում:

Գիշերվա կեսը չէր հելե, մեկ էլ թաքավորը տեսավ՝ պահակները դժդժոցը գցին: Տեսավ, որ մե վիշաբ օց սողալով էկավ, փաթթվում ա սանը, մագեթի վրավից էլ լժալով հընգնում ա: Պահակները թրով, խանչալով զարկում են: Տասը տեղով յարալու արին:

Վիշաբը, որ տեսավ՝ հիրանը կըսպանեն, սկսեց մարթի նման խոսալ. — Ընձի մի՛ կդորեք, սալդաթնե՛ր, կացնե՛ք, բան եմ ասում: Էտ մարթի վեցը տղին ես եմ կուլ տվե, հըմի էլ սաղ են, փորիս մեջն են, ետ տամ, թո դուս գան:

Էտ վախտը թաքավորն էլ, նագիր-վագիրն էլ էկան, թաքավորը վիշաբին ասավ՝ դե փսխա՛:

Վիշաբը կծկվավ, ծմրկտաց, բացվավ ու փսխեց:

Որ փսխեց, վիշաբի փորից դուս էկան վեց ախպերը: Կայնան չիվար, հիրար հերես են հիշկում, չեն իմանում, թե հինչ ա պատահե: Օցը ըտոնցը քնուկ վախտ էր կուլ տվե: Ելի քունը գլոխներն էր:

Որ վեց ախպերը օցի փորից դուս էկան, թաքավորը հրաման տվեց օցին դամա-դամա փոթեն:

Օցն ասավ. — Յարալու եմ, յարալուին չեն սպանի, անխիխճնե՛ր:

— Յարալու օցին սպանում են, գելին տիկ են հանում, — ասավ թաքավորը:

Ըտուց ետը թաքավորը օխտ ախպորն էլ հըղրկեց հիրանց խոր տունը, մե օր հետո էլի դառվեչի շորեր խաքավ, գնաց էտ մարթի տունը: Տանտերը որ դառվեչին տեսավ, փաթթվավ դառվեչի վիզը, պաշում ա, հա պաշում:

— Դու հիմաստուն իր, դառվե՛չ բաբա, իմ տղերքն ու խառնե-րը քեզի դուրբան:

Ըստոնք խասան հիրանց մուրագին, դուք էլ խասանք ձեր մուրագին, չարն էլ խափանվի: